2009, ՀՈՒՆՎԱՐ Ա, ԹԻՎ 1 (285)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԱՆՈՐԻ ՈՒՂԵՐՁԸ

### (31 դեկտեմբերի, 2008 թ.)

*Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ.*

*Նոր տարվա սեմին աղոթքով ու բարի սպասումներով են լցված մեր հոգիները: Համախմբվել ենք՝ ովքեր ընտանիքով, մերձավորների հետ, ովքեր՝ ծառայության մեջ, եւ դիմավորում ենք տարեմուտը՝ մեր լավատեսությունը կիսելով միմյանց հետ:*

*Հույսեր եւ նպատակներ ունենք, որ խորհում ենք իրագործել 2009 թվականին: Աստծուն առավել լսելի է մեր խնդրանքը, երբ մեր աղոթքները միավորված են խաղաղության եւ մարդկանց մեջ բարի կամեցողության ոգով: Խաղաղությամբ եւ միմյանց հանդեպ բարի կամեցողությամբ է ծնունդ առնում հույսը նոր աշխարհի, որը մենք՝ մարդկությունը, այսօր էլ ձգտում է կառուցել: Ձգտում ենք ստեղծել առավել կատարելագործվածը, վերափոխել կյանքը դեպի ավելի ապահովը, բարօրն ու բարեկեցիկը: Ձգտում ենք կառուցել աշխարհ, որ լեցուն լինի մարդասիրությամբ, ազնվությամբ, արդարությամբ, մխիթարությամբ ու երջանկությամբ:*

*Արդարեւ, իրենց նպատակով են գնահատվելու գործերն ու ժամանակի ընթացքները: Նոր տարին, որպես ժամանակի մի միավորը, նույնպես պիտի հիշվի եւ բնորոշվի մարդկանց գործերով, ինչպես պատմություն դարձած բոլոր տարիները, նաեւ՝ 2008 թվականը, որին այսօր հրաժեշտ ենք տալիս:*

*2008 թվականը ազգային եւ եկեղեցական մեր կյանքում հատկանշվեց ե՛ւ ձեռքբերումներով ու հաղթանակներով, ե՛ւ դժվարություններով ու ցավով: Ապրեցինք տագնապը մարտյան ողբերգական դեպքերի՝ դիմակայելով այն մեր երկիրը խաղաղ, մեր պետությունն անվտանգ պահելու, անկախության եւ ազատ կյանքի մեր թանկ ձեռքբերումներն առավել ամրապնդելու ու զորացնելու ձգտումով: Աղոթքով ու դառն վերհուշով նշեցինք երկրաշարժի 20-րդ տարելիցը, նշեցինք մեր Հայրենիքը շենացնելու հավատով, մեր ժողովրդի միասնական կյանքի ու լուսավոր գալիքի վստահությամբ:*

*Մյուռոնօրհնության սրբազան խորհրդով Սուրբ Էջմիածնում համախմբվեցին մեր ժողովրդի զավակները աշխարհի բոլոր կողմերից: Միավորեցինք մեր աղոթքները, որպեսզի սուրբ եւ սրբարար մյուռոնով մեր կյանքում առատանան երկնային շնորհները, լույսն ու օրհնությունը, զորանան եղբայրսիրությունն ու միաբանությունը:*

*Այսօր, սիրելինե՛ր, մեր ունեցած ձեռքբերումներով, ավարտուն եւ անավարտ գործերով պատմությանն ենք հանձնում 2008 թվականը: Դիմավորենք նոր տարին հավատով ու լավատեսությամբ: Հավատանք, որ մեր միաբանությամբ, համախումբ ջանքերով ու նվիրումով ձեռք ենք բերելու նոր հաջողություններ ու հաղթանակներ, հաղթահարելու ենք մեզ խանգարող արգելքներն ու խոչընդոտները, կանխատեսվող համընդհանուր տնտեսական ճգնաժամի դժվարությունները: Նոր տարին դիմավորենք նպատակադրված՝ ավելի ջանք ներդնելու, առավելը գործելու ի սեր մեր Հայրենիքի, հայ Սփյուռքի, հանուն Արցախի եւ համազգային մեր արդար իղձերի, ի սեր հոգեւոր մեր կյանքի պայծառության, գիտության, կրթության ու մշակույթի զորացման:*

*Այս մաղթանքով Մեր օրհնությունն ենք բերում Ձեզ, սիրելինե՛ր, Հայաստանում, ազատաշունչ Արցախում եւ Սփյուռքում ապրող մեր զավակներին:*

*Աղոթում ենք, որ Աստված խաղաղության մեջ առաջնորդի 2009 թվականը բոլոր ժողովուրդների կյանքում, մեր Հայրենիքի եւ համայն հայոց կյանքում:*

*Թող Տերը պարգեւի մեզ եւ ամենքին ձեռքբերումներով, արդար վաստակով, ուրախությամբ ու երջանկությամբ լեցուն օրհնյալ տարի:*

*Շնորհավոր Նոր տարի:*

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

### Սուրբ Էջմիածին, հունվարի 6, 2009 թ.

Հունվարի 6-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության հրաշափառ տոնը:

Մայր տաճարում հայրապետական սբ պատարագ մատուցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ որպես առընթերականներ ունենալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական եւ հրատարակչական բաժինների պատասխանատու Տ. Եզնիկ արք. Պետրոսյանին եւ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս Խաչատրյանին:

Հայրապետական թափորն Ամենայն Հայոց Հայրապետին եւ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին առաջնորդեց դեպի Մայր տաճար: Հայրապետական ամպհովանակիրներն էին ՀՀ Կրթության եւ գիտության նախարար Սպարտակ Սեյրանյանը, Ռազմիկ Դավոյանը, Լեւոն Մալխասյանը եւ «Հորիզոն 95» ՍՊԸ տնօրեն Գագիկ Գալստյանը:



Սբ պատարագի ընթացքում Նորին Սրբությունը հայրապետական իր պատգամն ուղղեց համայն հայությանը:

*Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:*

*«Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհեմ քաղաքի*
*Որդի՛ք մարդկան, օրհնեցէք,*
*Ձի վասն մեր մարմնացաւ»*
*(Շարական)*

*Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ հայոց ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփյուռս աշխարհի:*

*Օրհներգությամբ եւ գոհաբանական աղոթքներով այսօր տոնում ենք մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնը՝ ավետելով Աստծո մարդեղության եւ Փրկչի հայտնության բարի լուրը:*



*Մեր եկեղեցու աղոթասեր հայրերը Սուրբ Ծնունդը կոչել են «խորհուրդ մեծ եւ սքանչելի»: Այդպես են անվանել, քանզի անհնար է բացատրել, թե ինչպե՞ս անբավելին՝ հավիտենականն ու անսահմանը, խանձարուրի մեջ պարուրվեց, ինչպե՞ս Աստծո Խոսքն ու Իմաստությունը ծնվեց ոչ բանական կենդանիների մսուրում: Մարդկային միտքին անհասանելի է մնում, թե ինչպե՞ս Աստծո Միածին Որդին, Արարչի Փառքի Լույսը արարած եղավ, Տերը ծառայի կերպարանք ստացավ:*

*Աստծո այս մեծ հրաշքի ինչպես լինելը չգիտենք եւ չենք կարողանում բացատրել, սակայն գիտենք այդ հրաշքի պատճառը. «Ձի վասն մեր մարմնացաւ». «Որովհետեւ մեզ համար մարմնացավ»: Իրավամբ, այս մի քանի բառերը բացատրում են Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության Բարձրյալի նախախնամական տնօրինությունը:*

*Աստված Տերն է եւ Արարիչը «երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից»: Նրա փառքն են պատմում Իր նյութեղեն եւ հոգեղեն ստեղծագործությունները՝ տիեզերքը, մարդիկ եւ հրեշտակները: Աստված համայնի՝ կարիքը չունի ո՛չ մարմնի, ո՛չ ժամանակի: Աստծո հավիտենական գահին բազմած Փրկչին պետք չէր երկնքի բարձունքներից իջնել մեղսակորույս աշխարհ: Խաղաղության Իշխանին պետք չէին հալածանք, չարչարանք, խաչելություն, պետք չէին փշե պսակը, մահը կամ հարությունը:*

*Բայց այս բոլորը Փրկիչը հանձն առավ մեզ համար: Սերն Աստծո՝ մարմին առավ, որպեսզի ազատի մեզ մեղքի ու մահվան իշխանությունից եւ արժանացնի երանությանը հավիտենական կյանքի: «Սրանում է սերը, մենք չէ, որ սիրեցինք Աստծուն, այլ Նա սիրեց մեզ եւ ուղարկեց Իր Որդուն՝ մեր մեղքերի քավության համար» (Ա Հովհ. Դ 10): Մեր պաշտելի Աստված չի ցանկանում մեր մահը կամ դատապարտությունը, դրա համար իսկ եկավ մեր մեջ բնակվելու, եկավ վերափոխելու մեր կյանքը, պարգեւելու հույսը փրկության, կյանքը հավիտենական:*

Շարունակությունը՝ էջ 2

13 հունվարի

# ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅՈՒՆ

Առաքելահաստատ Հայոց Եկեղեցին Աստվածահայտնության ութերորդ օրը՝ հունվարի 13-ին, անշարժ կերպով նշում է Քրիստոսի անվանակոչության տոնը: Տոնացույցում այդ օրը հիշատակվում է որպես թլփատության տոն՝ թերեւս այն պատճառով, որ հրեական օրենքի համաձայն՝ թլփատության արարողության առթիվ էր անվանակոչություն կատարվում: Այդ սովորույթը գալիս է դեռեւս հնուց: Ըստ Հին Ուխտի՝ Աստված հրամայեց Աբրահամին, որ նրա սերնդակից բոլոր արու զավակները ծննդյան ութերորդ օրը թլփատվեն (Ծննդ. ԺԷ 12): Երկնային այդ հրահանգն անխափան կերպով շարունակվեց մինչեւ Մովսեսի ժամանակներն ու անցավ նրա սահմանած օրենքների շարքը: Այդ օրենքի գործադրությունը պարտադիր էր, իսկ չենթարկվողը պատժվում էր անգամ մահվամբ: «Ութե-



րորդ օրը չթլփատված արուն թող վերանա իր ցեղի միջից, որովհետեւ խախտած կլինի Իմ ուխտը» (Ծննդ. ԺԷ 14): Ուստի Հովսեփը եւ Մարիամը՝ որպես բարեպաշտ ու օրինապահ հրեաներ, ութ օրական Փրկչին տարան տաճար եւ թլփատման արարողությունից անմիջապես հետո անվանակոչեցին Հիսուս. «Երբ ութ օրերը լրացան, եւ Նա թլփատվեց, Նրա անունը Հիսուս դրվեց, ինչպես հրեշտակի կողմից կոչվել էր, երբ դեռ չէր հղացել մոր որովայնում» (Ղուկ. Բ 21): Այսինքն, ինչպես խորհում է սբ Հովհան Ոսկեբերան Հայրապետը, եթե մենք անվանակոչվում ենք ծնվելուց հետո, ապա Հիսուսն անվանակոչվեց ծնունդից դեռեւս շատ առաջ, քանի որ «Նա սկզբից Աստծո մոտ էր» (Հովհ. Ա 2): Հիսուսը կոչվեց Փրկիչ, որովհետեւ ուներ փրկչի Իր գործն ու առաքելությունը: Այդ անունը հայտնի դարձավ Մարիամին ավետման օրը՝ Գաբրիել հրեշտակապետի, իսկ Հովսեփին՝ երազի միջոցով: «Մարիամը մի Որդի պիտի ծնի, եւ Նրա անունը Հիսուս պիտի դնես, քանի որ Նա պիտի փրկի իր ժողովրդին մեղքերից» (Մատթ. Ա 21): Իսկ Քրիստոս բառը թարգմանաբար նշանակում է Օծյալ, այսինքն՝ աստվածային նախախնամությամբ երկիր առաքված՝ կարեւորագույն գործ կատարելու: Եսայու մարգարեության մեջ Քրիստոսին տրված է նաեւ Էմմանուել անունը, որը նշանակում է «Աստված մեզ հետ» (Մատթ. Ա 23-24):

Քրիստոնեության տարածման ավելի վաղ ժամանակներում հրեա քրիստոնյաները շարունակում էին պահպանել թլփատության սովորույթը, բայց Պողոս առաքյալն արգելեց դրա հետագա գործածությունը՝ փոխարինելով այն հոգու թլփատությամբ:

*Արմեն սրկ. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

15 հունվարի

# ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ ԾՆՈՒՆԴԸ

***«Ապա ի՞նչ տեսնելու ելաք. մի մարգարե՞. այո՛, ասում եմ ձեզ. առավե՛լ քան մի մարգարե, որովհետեւ նա է, որի մասին գրված է. «Ահա ես կուղարկեմ իմ պատգամավորին Քո առջեւից, որ Քո առաջ ճանապարհը պատրաստի» (Մատթ.ԺԱ 9-10)***



Ս. Հովհաննես Մկրտչի ծնունդը խիստ նշանակալից է իր խորհրդավորությամբ ու գեղեցկությամբ. նա աշխարհ եկավ բարեպաշտ ու սրբակյաց ծնողների ջերմեռանդ աղոթքներով: Աստվածապաշտ ու երկյուղած մարդիկ էին նրա ծնողները, սակայն իրենց օրերում ենթարկվեցին մի այնպիսի փորձության, որից ավելի մեծ ու ծանր ողբերգություն չկար Հին Ուխտի Եկեղեցում. ամուսնության սկզբնական շրջանից մինչեւ ծերություն զուրկ էին երեխաներից: Իսկ այն ժամանակներում նման իրողությունը Աստծո անբարեհաճության ակնհայտ նշան էր դիտվում: Ս. Հովհաննեսի ծնողները, չնայած հնազանդ էին Տիրոջ պատվիրաններին եւ հարատեւում էին աղոթքների ու աղերսների մեջ, բայց, այնուամենայնիվ, իրենց Աստծո օրհնությունից զրկված ու մերժված էին համարում, քանի որ երկար տարիների ընթացքում ոչ մի արձագանք չէին տեսնում: Իսկ իրականում բոլոր խնդրանքներն արձանագրված էին երկնքում, եւ նրանց մեծագույն պարգեւ էր սպասվում:

Ուստի ծերության օրոք, երբ արդեն դադարել էին հուսալուց կամ հավատալուց, ընծայվում է մի այնպիսի զավակ, որի ծնունդը համընդհանուր ուրախության պատճառ եղավ, եւ որն Աստծո կողմից ուղարկված էր հարթելու ու նախապատրաստելու ճանապարհները՝ աշխարհի Փրկչի համար: Քրիստոսն ասում է. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, կանանցից ծնվածների մեջ Հովհաննես Մկրտչից ավելի մեծը չի եղել, եւ եթե ուզում եք ընդունել, Հովհաննեսն է Եղիան, որ գալու է» (Մատթ. ԺԱ 11): Այսպես, լեռնային Քեբրոն քաղաքում էին ապրում Հովհաննես Մկրտչի բարեպաշտ ծնողները՝ Զաքարիան՝ Երուսաղեմի տաճարի քահանան, եւ նրա կինը՝ Եղիսաբեթը, որոնք Ահարոնյան քահանայական ցեղից էին: Մի օր, երբ Զաքարիան հերթի կարգով մտավ տաճար՝ խնկարկելու, իսկ ժողովուրդը դրսում աղոթում էր, հանկարծ մի հրեշտակ հայտնվեց խնկոց սեղանի աջ կողմում:

Տեսնելով նրան՝ քահանան շփոթվեց ու վախեցավ, իսկ հրեշտակն ասաց նրան. «Մի՛ վախեցիր, Զաքարիա՛, որովհետեւ քո աղոթքը լսելի եղավ. քո կին Եղիսաբեթը մի որդի կծնի քեզ, նրա անունը Հովհաննես կդնես: Նա քեզ համար ուրախություն եւ ցնծություն կլինի, ու շատերը կուրախանան նրա ծնունդով, որովհետեւ նա Տիրոջ առաջ մեծ կլինի, գինի եւ օղի չի խմի ու մոր որովայնից սկսած Սուրբ Հոգով կլցվի եւ Իսրայելի որդիներից շատերին կդարձնի դեպի իրենց Տեր Աստվածը» (Ղուկ. Ա 13-16): Եվ Զաքարիան ասաց հրեշտակին. «Ես ինչպե՞ս կիմանամ այդ, քանի որ ես ծեր եմ, եւ կինս էլ առաջացած տարիքում է»: Հրեշտակը նրան պատասխանեց. «Ես Գաբրիելն եմ, որ կանգնում եմ Աստծո առաջ. ես ուղարկվեցի խոսելու քեզ հետ եւ այդ բանը քեզ ավետելու: Եվ ահա՛, դու համր կլինես ու չես կարողանա խոսել մինչեւ այն օրը, երբ այդ կատարվի, քանի որ դու չհավատացիր իմ խոսքերին, որ կիրականանան իրենց ժամանակին»: Այսպես ավետվեց Մկրտչի ծնունդը նրա հորը: Այդ ընթացքում ժողովուրդն սպասում էր Զաքարիային եւ զարմանում, որ նա հապաղում է տաճարում: Վերջինս, դուրս գալով, չէր խոսում, այլ միայն նշաններով բացատրում էր նրանց տեսիլքի մասին:

Այսպիսով, բարեպաշտ ու ամուլ ընտանիքում, ծնողների տարեց հասակում ծնվում է աղոթքներով խնդրված եւ ի վերուստ նախախնամված որդին: Երբ նրանց բոլոր հարազատներն ու մտերիմներն իմացան այդ մասին, շատ ուրախացան եւ ութերորդ օրը եկան թլփատելու մանկանը: Երբ որոշեցին կոչել նրան հոր՝ Զաքարիայի անունով, մայրը մերժեց եւ ասաց. «Ո՛չ, այլ Հովհաննես պետք է կոչվի»: Նրան ասացին. «Սակայն քո ազգատոհմի մեջ չկա մեկը, որի անունը Հովհաննես լինի» (Ղուկ. Ա 59-61):

Այնուհետ նշաններով հարցրին հոր կարծիքն այդ առթիվ, թե ի՞նչ անուն կցանկանա որդուն տալ: Զաքարիան մի տախտակ պահանջեց եւ վերցնելով գրեց վրան. «Դրա անունը Հովհաննես է», որ նշանակում է «Աստված շնորհ արեց»: Նույն պահին նա սկսեց խոսել ու փառաբանել Աստծուն: «Եվ ահ ընկավ բոլորի մեջ, որ լսեցին այս: Եվ բոլոր լսողները պահում էին իրենց սրտերում այս ամենը եւ ասում էին. «Արդյոք ի՞նչ կլինի այս մանուկը»: Այնուհետ Զաքարիան Սուրբ Հոգով լցվեց ու մարգարեացավ Փրկչի եւ Նրա հետ եկող բարեբեր օրերի մասին, որից հետո մարգարեորեն բարբառեց նաեւ իր որդու մասին. «Եվ դո՛ւ, ով մանուկ, Բարձրյալի մարգարեն պիտի կոչվես, որովհետեւ պիտի գնաս Տիրոջ առջեւից՝ պատրաստելու Նրա ճանապարհները, տալու Նրա ժողովրդին փրկության գիտությունը՝ նրանց մեղքերի թողության համար» (Ղուկ. Ա 76-80):

Երբ Հերովդես Մեծը հրաման տվեց սպանել Բեթղեհեմի բոլոր արու զավակներին, այդ ժամանակ բարեպաշտ Եղիսաբեթը որդու հետ առանձնացավ անապատում: Այնպես որ ծնողների մահից հետո Հովհաննեսը մնաց մենակ, եւ վաղ հասակից անապատը դարձավ նրա կրթիչն ու դաստիարակը: Նրան չդիպավ որեւէ առօրեական, կենցաղային կամ աշխարհային տարր: ՍՀովհաննեսը մեծացավ վայրի ու անբերրի անապատում՝ խստակրոն կյանքով, պահքով ու աղոթքներով, աստվածաբույր խոհերով նախապատրաստելով իրեն մեծագույն ծառայությանը: Նա «ուղտի մազից զգեստ ուներ եւ կաշվե գոտի՝ իր մեջքին, իսկ նրա կերակուրն էր մորեխ ու վայրի մեղր» (Մատթ. Գ 4): Այն ժամանակ մորեխը սուրբ կերակուր էր համարվում (Ղեւտ. ԺԱ 22):

Թե ինչպես նա աճեց Աստծո առաջ, եւ ինչպես էր ուղեկցվում նրա ներքին պայքարն աշխարհի հետ, հայտնի չէ: Այլ աշխարհը ճանաչեց նրան միայն այն ժամանակ, երբ նա հայտնվեց իր ողջ գեղեցկությամբ, անբասիր ոգով առլեցուն՝ քարոզելու մարդկանց փրկության, ապաշխարության ուղին եւ Փրկչի գալստյան մասին: Այսպիսով, երբ «ժամանակը լրացավ», հանդես եկավ մարդկությանը ծառայելու մեծ անապատականը եւ իր կոչումին հնազանդ՝ սկսեց պատրաստել մարդկանց Ավետյաց Փրկչին ընդունելու համար: Նա շուրջ 30 տարեկան էր, երբ հոգու մղումով հայտնվեց Հորդանանի ափերի մոտ: Այդ ժամանակ Երուսաղեմի ողջ շրջակայքից գալիս էին նրա մոտ՝ մկրտվելու եւ իրենց մեղքերը խոստովանելու: Տեսնելով իր մոտ եկող մեղավորների թվում Աստծո Անմեղ Գառին՝ սբ Հովհաննեսը դրանով ավարտեց իր առաքելությունը երկրում եւ ասես առհավետ դրոշմեց իր ծառայությունը: Աստծո մարգարեի, Տիրոջը մկրտողի ու ապաշխարության քարոզչի կյանքն այսպես ավարտվեց: Ինչպես աղոթքով եկած բոլոր զավակները՝ Իսահակը, Սամվելը, Մարիամը եւ ուրիշներ, այնպես էլ Հովհաննես Մկրտիչը, որպես Աստծո նվիրյալ, մինչեւ վերջ հավատարիմ էր Աստծուն: Երկիր գալով՝ նա սկսեց եռանդագին իրագործել իրեն վերապահված հանձնարարությունը:



Նա մերկացնում էր բոլոր կոչումների ու դիրքերի տեր մարդկանց արատները եւ պահանջում ճշմարտության շավղով քայլել: Նա հրապարակավ, բացեիբաց դիմակազերծում էր փարիսեցիներին, սադուկեցիներին՝ ցույց տալով նրանց իրական տեսքը: Նա ազատորեն խոսում էր հռոմեացի զինվորականների հետ, որ այդքան հալածանք ու վիրավորանք էին պատճառել հրեաներին: Նա ազատորեն խոսեց անգամ թագավորի՝ Հերովդեսի հետ, որ ամուսնացել էր իր հարազատ, դեռեւս կենդանի եղբոր՝ Փիլիպոսի կնոջ՝ Հերովդիայի հետ: Արքայական հարկի տակ կատարված այդ մեղքը մեծ գայթակղություն էր, եւ Հովհաննեսը՝ որպես Աստծուց առաքված, խիզախորեն ասաց. «Օրինավոր չէ, որ դու նրան իբրեւ կին ունենաս»:

Հերովդեսն այդ խոսքերի համար ցանկացավ սպանել նրան, բայց վախեցավ ժողովրդից, քանի որ նրան ստույգ մարգարե էին համարում, ուստի միայն բանտարկեց:

Հերովդեսի ծննդյան օրը Հերովդիայի դուստրը, հավաքվածների առջեւ պարելով, գոհացրեց թագավորին, եւ վերջինս երդումով խոստացավ տալ նրան այն ամենը, ինչ կցանկանա: Աղջիկը, մոր հրահրումով, թագավորին ասաց. «Տո՛ւր ինձ այստեղ՝ սկուտեղի վրա, Հովհաննես Մկրտչի գլուխը» (Մատթ. ԺԴ 3-12): Արքան տրտմեց, բայց քանի որ բոլորի առջեւ երդվել էր, հրամայեց գլխատել Հովհաննեսին: «Եվ նրա գլուխը բերվեց սկուտեղով ու տրվեց աղջկան: Եվ սա տվեց այն իր մորը: Իսկ Հովհաննեսի աշակերտները եկան վերցրին մարմինը եւ թաղեցին. եւ եկան պատմեցին Հիսուսին» (Մատթ. ԺԴ 12):

Հայ Եկեղեցին սբ Հովհաննես Մկրտչի ծնունդն այս տարի նշում է հունվարի 15-ին:

*Արմեն սրկ. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԳՐԻԳՈՐ Ը ԽԱՆՁՈՂԱՏ

## (1411-1418)

Հակոբ Գ Սսեցի կաթողիկոսի թունավորումը, ամենայն հավանականությամբ, տեղի ունեցավ կա՛մ անմիջապես Գրիգոր Ը Խանձողատի կողմից, կա՛մ նրա ղեկավարությամբ: Վերջինս այդ եղանակով թափուր դարձրեց կաթողիկոսական աթոռը եւ կարողացավ տիրել դրան: Նրա նախընթաց գործունեությանը, ծագմանը եւ ծննդավայրին վերաբերող տեղեկություններ չեն պահպանվել: Սոսկ կարելի է ենթադրել, որ եղել է ազդեցիկ եպիսկոպոսներից եւ հովանավորվել է արտաքին ուժերի կողմից: Կոչվել է Խանձողատ, սակայն պատճառը հայտնի չէ: Սսի կաթողիկոսների շարքում եղել է, թերեւս, ամենավատթարը: Վիճաբանությունների տեղիք է տալիս նրա հովվապետության տեւողությունը: Մեկ տեղեկության համաձայն՝ նա կաթողիկոսել է 7 տարի, այսինքն՝ մինչեւ 1418 թիվը: Սրան համահունչ է Առաքել Դավրիժեցու այն հաղորդումը, թե 1418 թվին Գրիգոր Խանձողատին աքսորեցին: Սակայն նա հիշատակվում է նաեւ 1420 թվին, ինչը կասկածի տակ է առնում նախորդ տեղեկությունը: Բայց կան հիշատակարաններ, որոնք նրա հովվապետության ավարտը դնում են 1416-ին, քանի որ այդ նույն թվականին հիշվում է Պողոս կաթողիկոսը: Եթե հաշվի առնենք Ե եւ Է տառերի շփոթը ձեռագրերում, ապա հավանական է կարծել, որ նրա կաթողիկոսության ավարտը պետք է դնել 1418 թվին, իսկ 1420 թվականը, հավանաբար, չիմացության արդյունք է:

Գրիգոր Խանձողատի գործունեության 7-ամյա շրջանի մասին հիշատակներ չեն պահպանվել: Ինչ էլ որ հայտնի է, շատ վատ է ներկայացնում նրան: Կիլիկիո կաթողիկոսության խնդիրը գնալով ավելի էր անհանգստացնում Արեւելյան կամ բուն Հայաստանի հոգեւորականությանը: Աղթամարի խնդիրը, որ բարձրացրեց Գրիգոր Տաթեւացին, ամբողջովին ձախողվեց: Իսկ դա էլ, փաստորեն, կապվում էր Կիլիկիայի կաթողիկոսության հետ: Դավիթի գահընկեցությունը միայն նրա ինքնապաշտպանության բնազդն ուժեղացրեց, եւ գաղափարն էլ մեռավ Գրիգոր Տաթեւացու մահով: Սակայն խնդիրը մի տեսակ մարմրում էր: Թե՛ Սյունիքի եւ թե՛ այնտեղ գտնվող վասպուրականցի հոգեւորականները մտադիր էին քայլեր ձեռնարկել՝ թույլ չտալու համար Սսում տեղ գտած անկարգությունները: Նրանք կամենում էին նախկին շուքը վերադարձնել Կիլիկիո կաթողիկոսությանը: Այլապես Սիսն ամփոփվել եւ մեկուսացել էր՝ հայտնվելով մի խումբ եկեղեցականների ձեռքում՝ կտրվելով բուն Հայաստանից եւ համահայկական խնդիրներից: Իսկ այս ամենը միայն անկարգությունների ու խախտումների համար դուռ էր բացում: Թովմա Մեծոփեցու ասելով՝ Կիլիկիայում Կոստանդին Կեսարացու եւ Գրիգոր Անավարզեցու ժամանակներից մնացել էր աղթարմայության խմորը, փչացել էին բարքերը. շատերը գայթակղվում եւ հեռանում էին քրիստոնեությունից, տարածվում էին անառակությունը, հարբեցողությունը, աճել էր արծաթասիրությունը, ծեսերն աղավաղվում էին, մի վիճակում 3-4 եպիսկոպոս էին ձեռնադրում, մեղավորներին հոգեւորական էին ձեռնադրում, աշխարհը լցրեցին նզովքներով եւ բանադրությամբ, խախտեցին Լուսավորչի կանոնները, ո՛չ Լուսավորչին էին ճանաչում եւ ո՛չ էլ՝ նրա աջը:

Խանձողատի ժամանակ բարքերն ավելի վատացան, ինչն ստիպեց բուն Հայաստանի հոգեւորականներին միջամտելու կաթողիկոսության գործերին: Խորհրդակցություններ գումարվեցին, որոնց վերաբերյալ տեղեկություններ չեն պահպանվել: Սյունեցիք, այրարատցիք, արճիշեցիք եւ աղթամարցիք միասնական դիրք գրավեցին աթոռը Կիլիկիայից դուրս բերելու եւ բուն Հայաստան վերադարձնելու հարցում: Ըստ որում՝ հարցը դրված էր այնպես, որ հայրապետական աթոռը պետք է վերահաստատվի Սբ Էջմիածնում, իսկ Աղթամարի կաթողիկոսությունը՝ վերացվի: Վերջին տեսակետին համակերպվել էր անգամ Աղթամարի կաթողիկոսը: Նա հույս ուներ դառնալու Ամենայն Հայոց կաթողիկոս: Թերեւս այդ պատճառով Դավիթ Աղթամարցին ավելի ուշ հեղինակների կողմից հաճախ մտցվում է Հայոց հայրապետների շարքը:



Արեւելյան եպիսկոպոսները, որպես նախապատրաստական քայլ, պատվիրակ ուղարկեցին Սիս՝ դրությունը տեղում քննելու եւ բարեկարգելու առաքելությամբ: Որպես պատվիրակ ուղարկվեց Երուսաղեմի պատրիարք Պողոս արքեպիսկոպոսը, որը հաջորդել էր Սարգիս պատրիարքին: Պողոսը ծնվել էր Այրարատի Գառնիում: Այդ առաքելության համար Պողոսը դիտվել էր ամենահարմար անձը: Նա պատրիարք էր դարձել 1417 թվին եւ մեծապես օգտակար եղել միաբանությանը: Նա Սիս մեկնեց 1417-ին կամ 1418-ին, սակայն տեղեկություն կա, որ դա եղել է Խանձողատի գահընկեցությունից մեկ տարի առաջ: Պողոսին հաջողվեց կաթողիկոսի զեղծումները մեջտեղ հանել եւ նրանից հեռացնել նրա գործակիցներին ու շահագրգիռ անձանց: Եվ ամենակարեւորը՝ կարողացել է դեպի իրեն տրամադրել տեղի ամիրային: Պողոսին հաջողվեց զեղծումների համար տապալել Գրիգոր Խանձողատին՝ մահմեդական ամիրայի միջոցով: Դա է ապացուցում նաեւ այն փաստը, որ կաթողիկոսին աքսորեցին, ինչը հնարավոր չէր առանց տեղի ամիրայի օգնության: Բայց ո՞ւր եւ ինչպե՞ս, հայտնի չէ: Չի բացառվում, որ անգամ բանտարկվել է գահընկեցությունից հետո: Ավելին. դատելով որոշ կցկտուր հաղորդումներից՝ կարելի է կարծել, որ նրան բռնադատեցին հավատուրացության: Համենայն դեպս, լավ կլիներ, որ այս ենթադրությունը չարդարանար:

Հարկ էր, որ գահընկեցությունը կատարվեր քննությամբ, կանոնական օրենքով եւ եկեղեցական ժողովով: Միայն այս դեպքում կաթողիկոսի գահընկեցությունը կլիներ օրինական: Այլապես նոր կաթողիկոսը կհամարվեր հակաթոռ: Ըստ էության՝ այս դեպքում գործեց ոչ թե օրենքը, այլ բուն ուժը: Օրինականության միակ արտահայտությունը Պողոս պատրիարքին որպես քննիչ ուղարկելն էր: Եվ վերջապես, որ նա ուներ Արեւելյան եպիսկոպոսների օրինական հանձնարարությունը: Երեւի Հայաստանի անկախության բացակայության պայմաններում որեւէ այլ ձեւով հնարավոր չէր կաթողիկոսի գահընկեցությունը:

*Շարունակությունը՝ էջ 5*

# ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

*Սկիզբը՝ 2008, թիվ 24*

### Բուրգասի Սուրբ Խաչ եկեղեցին

Պատմությունը լռում է, գրեթե ոչինչ չի հայտնում, թե Բուրգասի Ս. Խաչ հայկական եկեղեցին երբ եւ ով է կառուցել: Հայտնի է միայն, որ եկեղեցին տարբեր անուններ է ունեցել, ինչի պատճառը նույնպես անհայտ է:

Այսօր պաշտոնական գրություններում նշվում է, թե Բուրգասի հայկական եկեղեցին կառուցվել է 18-րդ դարում: Պատմագետ Մինաս Բժշկյանը գրում է, որ 1808 թվականին, երբ ճամփորդում էր Բուլղարիայում, եղել է նաեւ Բուրգաս քաղաքում, ուր այդ ժամանակ կային 20 հայ ընտանիք եւ մի եկեղեցի՝ Ս. Աստվածածին անունով: 1832 թվականին եկեղեցին արդեն սբ Ստեփանոսի անունով էր, իսկ 1853-ից մինչ օրս այն կրում է Ս. Խաչ անունը: Տ. Զարեհ քահանա Ջենանյանը վերջերս բացահայտել է Բուրգասի հայկական եկեղեցու կառուցման ճշգրիտ ժամանակաշրջանը: Տեր հայրը, եկեղեցու հնություններն ուսումնասիրելիս, խաչերից մեկի վրա պատահաբար նկատել է անընթեռնելի մի գրություն: Զգուշորեն մաքրելով՝ կարդացել է, որ խաչը Բուրգասի եկեղեցուն նվիրել է Ավետյան ազգանունով մի երեցկին՝ 1247 թվականին: Ուրեմն Բուրգասի հայկական եկեղեցին կառուցվել է ոչ թե 18-րդ, այլ շատ ավելի վաղ՝ 13-րդ դարում: Այսօր այդ խաչը եկեղեցու կառուցման ճշգրիտ ժամանակաշրջանը հաստատող միակ վկայությունն է:

Ս. Խաչ եկեղեցու հարեւանությամբ գործում է «Երեւան» սրճարանը, որը բուրգասահայերի համար Հայաստանը հիշեցնող մի անկյուն է: Այն դարձել է յուրօրինակ հավաքատեղի՝ հայերեն լսելու, Հայաստանի մասին խոսելու համար: Այստեղ ամեն ինչ հայկական է՝ երաժշտությունը, տոլման, անգամ սուրճը...


Съдът решава за арменския геноцид


Съдът решава съдбата на арменската декларация
НАТАЛИЯ ВУЧКОВА

Բուրգասում հայ հոգեւոր համերգներ հազվադեպ են լինում: Հայաստանից այստեղ գալիս են հիմնականում պարային խմբեր կամ էստրադային ժանրի երգիչներ:

Բուլղարիայի բոլոր հայկական եկեղեցիներում ամեն կիրակի Պատարագ է մատուցվում, պսակադրության եւ մկրտության արարողություն կատարվում: Բուլղարահայությանը միավորող, նրանց ինքնությունը պահպանող միակ օջախը, ինչպես դարեր առաջ, այնպես էլ այսօր, եկեղեցին է, ուր գալիս են հայերը՝ հոգեւոր մխիթարություն ստանալու: Եկեղեցու հետ կապն ավելի ամրապնդվեց, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն 2002 թվականին այցելեց հյուրընկալ այս երկրում ապրող հայ ժողովրդի բեկորներին: Հայրապետական ուղեւորությունը պատմական իրադարձություն էր Սփյուռքի եկեղեցական տարեգրության մեջ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ից հետո դեռ նման այցելություն չէր եղել: Վեհափառը եղավ գրեթե բոլոր հայաշատ քաղաքներում՝ Սոֆիայում, Պլովդիվում, Վառնայում, եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կենսարար օրհնությունը բաշխեց բուլղարահայությանը՝ վերահաստատելով, որ հյուրընկալ այս երկրում կենդանի է Հայ Եկեղեցին:

### Ինչո՞ւ Բուլղարիան չի ճանաչում Հայոց ցեղասպանությունը

Բուլղարիայում ապրող հայերի մեծամասնությունը 1915 թվականի եղեռնից փրկվածների ժառանգներ են, որոնք պարբերաբար համայնքային ներքին կյանքում, երկրի բարձրագույն ատյաններում բարձրացնում են Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը: Բուլղարիան, որ միշտ սրտաբաց ընդունել է հայերին, ապաստան տվել, աշխատելու հնարավորություն ընձեռել, թվում է, թե քաղաքական ասպարեզում էլ պետք է նման բարյացակամություն ցուցաբերեր: Սակայն Հայոց ցեղասպանության ճանաչման հարցն Ազգային ժողովը երկու անգամ մերժել է քննարկել: Բուլղարիայի Վառնա քաղաքի Ս. Սարգիս եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Սարգիս քահանա Հովհաննիսյանի փոխանցմամբ՝ Բուլղարիայում Ազգային ժողովի 240 պատգամավորներից 33-ը թուրք են, ովքեր նաեւ կոալիցիայի անդամ են: Բնականաբար, նման ԱԺ-ում խոսել կամ ընդունել տալ Հայոց ցեղասպանությունը անհնար է:

Բուլղարիայի բնակչության 12 տոկոսը թուրք է, եւ նման արգելքներ հայերն Ազգային ժողովում, թվում է, միշտ էլ կունենան: Հաջողության հասնելու համար բուլղարահայերը փոխեցին իրենց ռազմավարությունը. որոշվեց այնպես աշխատել, որ մինչ ԱԺ մտնելը՝ Բուլղարիայի 28 շրջանային քաղաքների խորհուրդները ճանաչեն Հայոց ցեղասպանությունը: Արդյունքում այսօր շրջանային քաղաքների կեսից ավելին արդեն ճանաչել եւ դատապարտել է դարի ոճրագործությունը:

Գործն ավելի բարդ էր Վառնայում, որի քաղաքային խորհրդում կային թուրք անդամներ: 2008 թվականի ապրիլի 24-ին Վառնայի Ս. Սարգիս եկեղեցում անմեղ զոհերի հիշատակին նվիրված սբ Պատարագին առաջին անգամ ներկա էին Կիրիլ Յորգանովը՝ Վառնայի քաղաքագլուխը, եւ Բորիսլավ Գուցանովը՝ քաղաքային խորհրդի ատենապետը: Կիրիլ Յորգանովը, ծաղկեպսակ դնելով եկեղեցու բակում եղեռնի զոհերին նվիրված հուշաքարին, հույս է հայտնել, որ Վառնան եւս կմիանա այն քաղաքներին, որոնք ճանաչել են Հայոց ցեղասպանությունը:

Մեկ ամիս անց, երբ Վառնայի քաղաքային խորհուրդը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը, խորհրդի թուրք անդամների ճնշման տակ այն չեղյալ հայտարարվեց: Դատարանը, ուր վերջին հույսով դիմել էին հայերը, վերահաստատեց քաղաքային խորհրդի առաջին որոշումը: Ըստ այդ որոշման՝ Վառնայի քաղաքային խորհուրդը կոչ է անում ԱԺ-ին ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Որոշման կետերից մեկով էլ ապրիլի 24-ը, որպես Հայոց ցեղասպանության օր, նշվելու է Վառնայի պաշտոնական օրացույցում:

Ե՞րբ հյուրընկալ ու հայասեր Բուլղարիան պաշտոնապես կճանաչի Հայոց ցեղասպանությունը, անհայտ է, Տ. Սարգիս քահանա Հովհաննիսյանը կարծում է, որ դա կլինի այն ժամանակ, երբ թուրքերը մանդատ չեն ունենա ԱԺ-ում:

*Ալվարդ ՆԱԶԱՐՅԱՆ*

# ՆԵՐՍԵՍ ՄՈԿԱՑԻ

## (Մոտ 1575-1625)



*Սկիզբը՝ 2008, թիվ՝ 24*

### ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Մոկացին գրել է հավատի երգեր, մշակել ժողովրդական ծագում ունեցող պատմություններ, անդրադարձել իրական փաստերի:

Իր ամբողջ ստեղծագործությամբ Ներսես Մոկացին երգել է անապատականի իր հոգեւոր երգը: Ճգնակենցաղ ու սակավապետ վարդապետն իր աղոթքներն ու հոգեւոր բովանդակություն ունեցող պատմությունները շարադրել է ե՛ւ հոգին թեթեւացնելու համար, ե՛ւ ի պատասխան միաբանների խնդրանքի: Այսինքն՝ նրա ստեղծագործության մեջ մի ամբողջ ժամանակի թե՛ անհատական-հեղինակային, թե՛ համախումբ հավաքական ձայնն է:

*«Ներբողեան գովեստի չորեցունց աբանցն, որք եղեն սկիզբն անապատի կարգիլ յազգս մեր»:* Ինչպես վերնագիրն է հուշում, ապա եւ շարադրանքը հաստատում, այս երկը գովեստի ներբող է՝ նվիրված Սյունյաց Մեծ անապատին: Բաղկացած է 476 տողից: Բնույթով պատմողական պոեմ է: Ինքն է գրում. *«Աստանաւր պատմել կամիմ /Չեղելոցս, որ մեզ դիպեցաւն»*:

Ներբողի պատվիրատուն Փիլիպոս դպիրն է, ապագա Փիլիպոս Աղբակեցի հայրապետը (1633-1655): Վերջինիս հետ Մոկացին եղել է Սյունյաց Մեծ անապատում, որը հիմնադրվել է 1610 թ., իսկ հիմնադիրներն էին Սարգիս Ամբերդցին, Կիրակոս Տրապիզոնցին, Պողոս Մոկացին, Մովսես Տաթեւացին: Նրանց սատարել է զորավար Մելիք Հայկազնը, որը վայելում էր Շահ Աբասի համակրանքը: Ներբողը գրել է անապատի առաջին հիմնադիրների՝ Ամբերդցու եւ Տրապիզոնցու մահվան կապակցությամբ, որոնք իրար են հաջորդել 1620, 1621 թթ.: Վստահորեն կարելի է ասել, որ այն գրվել է 1621 թ.՝ նախքան Լիմ տեղափոխվելը:

Նախամուտքում նա դիմում է Հիսուս Քրիստոսին՝ մարդկային ազգի նորոգողին, որն այս ետին ժամանակներում եւս բացում է դուռը բարու եւ ողորմության: Հիշում է Շահ Աբասին, որը պատերազմում էր օսմանյան զորքերի դեմ, նրա զորավար՝ Հախնազարի որդի Մելիք Հայկազնին, նրան նմանեցնում Հայկազնին Տիգրան եւ այսպես գովերգում. *«Կորովի աղեղնաւոր, /Քամանդար անսխալական...»*:

Ահա այս ժամանակ. *«Յայսմ քանակեալ աւուրց Յատնեցաւ քարոզն ընտրութեան՝ /Պաւղոս վարդապետն արի, /Ջատագովն ճշմարտութեան»*: Նա կարծրագույն վեմերով հաստատում է հավատի վրա կառուցված հոգու տունը: Այն ենթարկվում է փորձության, բայցեւ մնում է հաստատուն.

*Իջին անձրեւաց հեղեղք,*
*Փորձութիւնք ի յորդոց մարդկան,*
*Ի Վասպուրական երկրին,*
*Մոկաց տուն եւ ի Քուրդաստան (էջ 50):*

Վասպուրական երկրից նա տեղափոխվում է Գողթան գավառ, բայց տեղի հոգեւորականները չեն ընդունում նրան. *«Յականակ կացին նմա /Եւ ընդդէմ նմին զինեցան...»*:

1618 թ. երկու կաթողիկոսները, եպիսկոպոսներ եւ այլ վանականներ ուխտ են անում ու գնում Թավրիզ՝ Ղառչըղա խանի դիվան: Վերադարձից հետո հայտնվում են մարդկային հոգու լուսատուները՝ Սարգիս մեծ եպիսկոպոսը եւ տեր Կիրակոսը, որոնց էլ *«Աւժանդակ է հաս Պաւղոսն այն»*: Երաշտացյալ գետինը նրանք արտասուքով են ոռոգում եւ խոպանը դարձնում բերրի անդաստան.

*Իջցուք ի յայգիս եղբարք*
*Եւ տեսցուք ծառք համանգամայն,*
*Ծաղկեալ որթ, ե՛ւ թուզ, ե՛ւ նուշ,*
*Նռնենիք, ե՛ւ մուրտ, ե՛ւ շուշան (էջ 56):*

Այս մարդկանց, նրանց ջանքի ու եռանդի փոխհատուցումն, ահա, այս գովասանական ներբողյանն է: Տաթեւի հետ մեկտեղ հիշվում է Թանահատի անապատը: Սյունյաց Մեծ անապատի հիմնադիրները հիշվում են նաեւ այսպես. *«Մինն Պոնտացի գոլով, /Մինն ի տանէն Արարատեան»*: Այսինքն՝ Պոնտացի-Տրապիզոնցի, Արարատյան տնից-Ամբերդցի: Թեեւ երկուսն էին, բայց անապատում կառավարում է «մի կամք, մի կարգ, մի կրոն...»: Այս ամենի համար, ըստ նրա, Հայաստանը պետք է ցնծա եւ պետք է «երգել երգ հոմերական»: Անդրադառնում է իր երկրի վիճակին.

*Մանաւանդ այս Հայաստան*
*Վաղվաղուկ եւ փոփոխական,*
*Ի հարց եւ պապանց ուսաք,*
*Յառաջին սրբոցն ասացան,*
*Հիւսիսու հաւէն առնուն*
*Մեր ծաղկունքս եւ խիստ զաւրանան,*
*Եւ տապըն խորշակահար*
*Ծաղկընկէց առնէ առժամայն (էջ 62):*

Հիշատակարանում անդրադառնում է իրեն եւ իր երկի պատվիրատու Փիլիպոս դպիրին.

*Առ ձեզ պաղատիմ, եղբարք,*
*Ես՝ Ներսէս, յոյժ թշուառական*
*Հայցեցէք ընդ իմ առ հարքս՝*
*Յիշել զիս առ անմահ արքայն:*
*Փոքրիկ Փիլիպոս դպիր՝*
*Փափագող բանիս տաղական,*
*Զայս խնդիր արար, թէ սաս՛*
*Յիշատակ, որ ողորմի տան (էջ 63):*

Հավատի հարցերը Մոկացին արծարծում է նաեւ մյուս գործերի մեջ: *«Նորին Ներսէսի Մոկացւոյ ասացեալ ողբերգական»* տաղը (360 տող) ինքնախոստովանություն է: Գրում է.

*Արդ, Տէր իմ, Յիսուս Քրիստոս,*
*Քեզ եւ որք Քո ընտրեալ ծառայ*
*Զայս յայտնի բացադրութիւնս*
*Իմ կամաւ խոստովանեցայ (73):*

Իր մասին պատմում է այն տարիներից, երբ *«մանուկ մտավարժ»* էր: Վայելուչ մտքով ծաղկելով՝ ճանաչում է Տիրոջը եւ Նրանով լուսավորվում: Ամբողջ տաղն աստվածային հավատի փառաբանություն է, հավատ, որի դեմ ոչինչ է ամեն ինչ: Մոկացին գրում է, որ Տիրոջից է ամեն բան, ինչ լավ է, իսկ վատը մարդուց է.

*Զքանքարն ի Տեառնէ առի,*
*Ըստ առատ պարգեւաց Նորայ,*
*Ծրարեալ վարշամակաւ*
*Ծուլութեանս, որ յիս կայանայ (էջ 66):*

Հաջորդում են ինքնաձաղկող տողեր. *«Խոզից նմանեալ ի տիղմըս Մաւրիցըն շաղախեցայ», «Ես առ իս գիտուն ձեւացայ», «Ի կամս ապաստան եղեալ, Մտահաճ ինձ հաւանեցայ»*: Այնուհետեւ.

*Ես գիշերատես մըտաւք*
*Ի տըւէ խոր խաւարեցայ*
*Եւ երկմտութեան ալեաւք*
*Յանկայուն հոգըս ծփեցայ (էջ 68):*

Նա իրեն խորհուրդ է տալիս. *«Նախատպիդ դու միշտ ծառայեալ»*: Նախատիպն Աստվածն է, քանզի մարդը, ըստ Աստվածաշնչի, ստեղծվեց Աստծու ձեռքով: Շարունակում է պատմել իր մասին ու պարսավել իրեն, ինչպես յուրաքանչյուր հավատավոր քրիստոնյա: Ասում է. *«Աբբայի անուն առի»*, բայց *«Կանանց սիրով հեշտացայ», «Եւ արագափութով /Ի բարի վարձուց ձանձրացայ»*: Հաջորդում են համանման ինքնախարազանումներ, ընդհուպ. *«Ես ոչ գործեցի բարի...», «Ուղորդ աղուեսի ձագ եմ, /Այլ աւձի խիստ նմանեցայ...»*: Իր պակասությունը համարում է ռամիկ լեզվով գովասանելը. *«Յըռամկաց լեզուաւ գովեցայ...»*: Այսպես՝ *«Վերընթաց ճանապարհէն /Ինքնակամ ես սայթաքեցայ»*: Այնուհետեւ.

*Ռաբի, ռաբի յորջորջմամբ*
*Ինքնաշարժ փառամոլեցայ,*
*Ռամիկ ծառայից գեղջկաց*
*Ես անգամ ոչ նմանեցայ (էջ 71):*

Սա միջնադարն է՝ հավատի իր նվիրյալներով, որոնք պատրաստ էին ամեն կերպ նսեմացնել իրենց, երեւալ որպես անարժան մեկը.

*Հանդիպողք այսմ բանիս,*
*Որ վասն իմ գործոց խաւսեցայ,*
*Մեղադրէք յանդգնութեանս,*
*Որ առ վատ անձն իմ մատուցայ (էջ 72):*

Եվ այսքանից հետո՝

*Տէր, Տէր, մեծ, սուրբ եւ արդար,*
*Չիս կարդալն խիստ հեշտացայ... (էջ 72):*

Սա Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի մի շառավիղն է: Ինքնախոստովանություն եւ ինքնամաքրում՝ սա է խոսքի բարոյական առանցքը: Տարբերությունն այն է, որ Ներսես Մոկացին այստեղ խոսքը շատ ավելի է անձնավորել եւ դեպի Աստված է գնում իր կենսագրական փաստերի միջով:

Աղոթքն ինքնին ոչ միայն հոգեւոր գրականության, այլեւ գեղարվեստական գրականության տեսակ է: Այդպիսի գործերը ժամանակին ստեղծվել են որպես աղոթք, որպես Աստծուն ուղղված խոսք, որ հետագայում արդեն գիտակցվել են նաեւ որպես գեղարվեստական խոսքի տեսակ: Այս առումով ուշագրավ է *«Աղաւթք առանձնակի սրտահառաչ ձայնիւ պաղատանաւք արարեալ Ներսէս վարդապետի ի Լիմ անապատն»* երկը: Գրել է 1621-1625 թթ. միջեւ: Ակնհայտ ազդակներ ունի Նարեկացուց ( Բան Ի, բ):

Հրեշտակների եւ հրեշտակապետերի, նախահայրերի ու մարգարեների, բարեպաշտների ու դպիրների, քահանաների ու առաքյալների, աշակերտների ու մարտիրոսների, ճգնավորների ու կույսերի, հայրապետերի ու վարդապետների, սուրբ Աստվածածնի եւ Գրիգոր Լուսավորչի բարեխոսությամբ նա հայցում է.

*Բարերար Աստուած, մարդասէր,*
*Ողորմեա՛ ինձ, բազմամեղիս,*
*Ներող, գթած, աւրհնեալ եւ երկայնամիտ,*
*Գթա՛ ի տառապեալ գերիս*
*Եւ արձակեա՛ ի կապանաց վտանգիս:*
*<...> Նայեա ի պատկեր վշտացս դառնութեան,*
*Բազմավտանգ կրիցս կարեացս կցորդակիցս լեր բժշկապես*
*Եւ փարատեա զցաւս հոգեկան խիթմանս*
*Աստուած իմ եւ Տէր իմ,*
*Լոյս, կեանք,*
*Նորոգող, փրկաւղ եւ կեցուցիչ*
*Եւ քեզ փա՛ռք յաւիտեանս, ամէն (էջ 141-142):*

*Շարունակելի*

***Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

---

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՀԱԿՈԲ Գ ՍՍԵՑԻ

## (1404-1411)

*Սկիզբը՝ էջ 4*

Անհանգիստ էր քաղաքական կացությունը Գրիգոր Խանձողատի օրոք: Վրաստանի Ախլցխա քաղաքում մեծացել էր պարսիկների թիվը, քանի որ տեղի իշխան Արտբուգին՝ Իվանեի հիմար որդին, ավելի բարձրացնում էր նրանց, քան քրիստոնյաներին: Դա նույնիսկ քրիստոնյաների նախանձը շարժեց: Հայ եւ վրացի երիտասարդները խոզի ոսկորներ են նետում պարսիկների մզկիթ, եւ մահմեդականները վրեժխնդիր լինելու համար հրավիրում են Կարա-Յուսուփին, նրան են մատնում քաղաքը, որ ենթարկվում է ահավոր ավերածության ու կոտորածի: Թշնամին գերիներ շատ վերցրեց, որոնց հնարավոր եղավ ազատել մեծ փրկագնով: Յուսուփի արշավանքը եղավ 1416 թվին: Սակայն Կարա-Յուսուփի մղած հետագա կռիվները նրան հաջողություն չբերին: Նրա թուլացումից օգտվելով՝ ակ-կոյունլու Օսմանը 1417 թվին գրավեց Երզնկան, երբ Շահռուհի զորքերը մոտեցել էին Թավրիզին: Այդ ժամանակ էլ Յուսուփը մահացավ, նրա բանակը ցրվեց, իսկ նրա մնացորդները եկան ձմեռելու Քաջբերունիքում: Թաթարներն ավերում էին երկիրը, մինչեւ որ Բաղդադից եկավ Իսքենդերը, համախմբեց ուժերը եւ հարձակվեց ու ջախջախեց թշնամուն: Սակայն Շահռուհին հաջողվեց կրկին հաջողության հասնել եւ պարտության մատնել կարա-կոյունլու թուրքմեններին: Իսքենդերն ու նրա եղբայր Ասպահանն ստիպված եղան փախչել մինչեւ Մերդին եւ Մուսուլ: Դա տեղի ունեցավ 1421 թվին, սակայն երբ Շահռուհը ետ դարձավ, Իսքենդերը կրկին գրավեց Թավրիզը եւ վերականգնեց իր իշխանությունը:



Վիճակը ծանր էր Փոքր Ասիայում, որտեղ կռիվներ էին մղում եգիպտացիները, կարամանները եւ օսմանցիները: Կիլիկիան իր կարեւոր՝ Տարսոն քաղաքով հայտնվեց բախումների կենտրոնում, եւ Տարսոնը բազմիցս ձեռքից ձեռք անցավ: Մուհամմեդ Չելեբին՝ սուլթան Բայազետ Յըլդըրմի որդին եւ նրա հաջորդը, 1415-ին Ռամազանյաններից գրավեց Տարսոնը, սակայն երեք տարի անց այն գրավվեց եգիպտացիների, իսկ 1419-ին՝ կարամանցիների կողմից: 1420 թվին կրկին հայտնվեցին եգիպտացիները, եւ կարամաններն ստիպված էին լքել Կիլիկիան: Ըստ երեւույթին՝ այդ պատերազմի ժամանակ Սիսը հարձակումների չէր ենթարկվել, քանի որ վերջին դեպքերի կապակցությամբ այն չի հիշատակվում:

***Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
***ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,***
***պրոֆեսոր***

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՏՔԵՐԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

*Անցած տարի հնդկահայ փոքրաթիվ համայնքը եւս մեկ անգամ արժանացավ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական օրհնությանը: Վերջին երկու տարիների ընթացքում Նորին Սրբությունը երկրորդ անգամ հովվապետական այցով եղավ Հնդկաստանում՝ այցելելով Կալկաթա, Մադրաս, Չինսուրահ, Սեյդաբադ: Բոլոր այս վայրերում բնակվող հայերի թիվը չի հասնում 200-ի, որոնց մեծ մասը տարեցներ են: Նրանք են պատմական հայահոծ համայնքի կենդանի ժառանգները: Իսկ երբեմնի ծաղկուն գաղութի մասին խոսում են հայկական եկեղեցիներն ու տապանաքարերը, դեռեւս կանգուն բազմաթիվ հուշարձաններն ու շինությունները: Հայկական հետքն ամենուր է, որ ժամանակի ընթացքում, սակայն, կարող է աղոտանալ, եթե չլինի համապատասխան հոգածություն եւ խնամք:*

*Հնդկահայ համայնքի ներկայի ու անցյալի մասին է Հեղինե ՄԿՐՏՉՅԱՆԻ հարցազրույցը Տիգրան սրկ. ԲԱՂՈՒՄՅԱՆԻ հետ, ով շուրջ երեք տարի ծառայել է հնդկահայ գաղութում:*



*Մադրասի Սուրբ Աստվածածին եկեղեցին*

**- Հայ-հնդկական կապերը դարավոր պատմություն ունեն: Իսկ հնդկահայ գաղութը նաեւ իր ուրույն հետքն է թողել երկրի պատմության մեջ: Ինչպե՞ս է այն այսօր հիշվում:**

- Անհիշելի ժամանակներից են սկիզբ առնում հայ-հնդկական կապերը, որոնք միշտ էլ եղել են ջերմ եւ բարեկամական: Դեռեւս 16-րդ դարում, Աքբար թագավորի (1556-1605) իմաստուն եւ հեռահայաց քաղաքականության արդյունքում, հայերի շնորհիվ երկրում զարգացան արհեստագործությունն ու առեւտուրը, հայ վաճառականներին երկիր մտնելու ազատ իրավունք տրվեց: Ի դեպ՝ այդ ժամանակ ազգությամբ հայ էին երկրի գլխավոր դատավորը՝ Միր Աղըը կամ Աբդուլ Հայը, պալատական բժշկուհի Հուլիանան: Եվ վերջապես՝ հայուհի էր թագավորի կանանցից մեկը՝ Մարիամ Զամանի Բեգումը: Աքբարի հաջորդներից էր Աուրանգզեբ կայսրը, ով 1665 թ. հատուկ ֆարմանով հայերին հողակտոր հատկացրեց Սեյդաբադում, ուր մեր նախնիք 1758 թ. խոջա Պետրոսի ջանքերով կառուցեցին Ս. Աստվածածին եկեղեցին: Մինչ այսօր էլ դեռ պահպանվել է կայսեր հատկացրած այդ հողակտորը, որն իր մաքրությամբ եւ բարեկարգ վիճակով առանձնանում է շրջապատից: Այս ժամանակ էր ստեղծագործում Պարսկաստանից Հնդկաստան եկած սուֆիզմի միստիկ մտածող հայազգի Սարմադը, որի բանաստեղծական տաղանդը շատերը համեմատում են Ֆիրդուսու, Սաադիի, Հաֆեզի եւ Օմար Խայամի հետ: Ջամա մզկիթի մոտ գտնվող նրա գերեզմանն ուխտատեղի է մահմեդականության այս ճյուղի հետեւորդների համար: Ժամանակի նշանավոր վաճառականներից էին խոջա Փանոս Քալանթարը, խոջա Իսրայել Սարհադը, խոջա Վազեդը եւ ուրիշներ, ովքեր կարողանում էին նաեւ ամենատարբեր խնդիրներ լուծել պետական մակարդակներում: Մեկ բան շատ հստակ է, որ հյուրընկալ Հնդկաստանը շատ հայերի համար դարձավ հայրենիք, որտեղ հայ մարդը կարողացավ լիարժեքորեն ապրել իր ազգային, մշակութային եւ հոգեւոր բուռն կյանքով: Հաստատվելով բազմակրոն, հարուստ մշակույթ եւ հին քաղաքակրթություն ունեցող այդ զարմանահրաշ երկրում՝ հայերը ոչ միայն զբաղվել են առեւտրական գործունեությամբ, եկեղեցիներ եւ կրթության օջախներ հիմնել, այլեւ կարեւոր նպաստ են բերել Հնդկաստանի զարգացմանը, հարկ եղած դեպքում պաշտպանել երկիրը թշնամիներից: Յուրաքանչյուր հնդիկի համար նվիրական անուն է Գորգին խանը (Գրիգոր Հարությունյան), ով բենգալական բանակի հրամանատար էր նշանակվել Բենգալիայի իշխանի կողմից եւ գործուն մասնակցություն ունեցել 1762-1763 թթ. հնդիկ-անգլիական կռիվներին:

Ուրախալի է, որ մեր նորանկախ հանրապետության օրոք եւս այդ կապերն ավանդական ջերմ են ու բարեկամական, քանզի վաղուց անտի անցել են դարերի քննությունը:

**- Ինչպիսի՞ն է հայ համայնքի ներկայիս պատկերը:**

- Դժբախտաբար, երբեմնի ծաղկող, բարգավաճ եւ հոգեւոր-մշակութային բուռն կյանքով ապրող հնդկահայ գաղութի պատմությունն այսօր հիշողություն է: Միակ հայաշունչ քաղաքն այսօր Կալկաթան է, ուր ապրում է շուրջ 150 հայ: Մյուս քաղաքներում՝ Սեյդաբադում, Չինսուրահում, Մադրասում, Սուրաթում, Գվալիորում, Ագրայում եւ այլուր այլեւս հայեր չկան: Բոմբեյում ապրում են 3 հայուհիներ, որոնց շնորհիվ դեռ հնչում է հայ մարդու աղոթքը 1796 թ. հիմնադրված Ս. Պետրոս հայկական եկեղեցում:



*Տինգրայի Սբ Երրորդություն եկեղեցին*

Դեռեւս 1947 թ. հեղափոխությունից հետո հատկապես Կալկաթայից սկսված արտահոսքը դեպի Անգլիա, Ավստրալիա, ԱՄՆ եւ այլ երկրներ շարունակվում է ցայսօր: Ցավալի է նաեւ, որ այսօրվա կալկաթահայերի գերակշիռ մեծամասնությունը հայերենին չի տիրապետում, անտեղյակ է գաղութի հարուստ պատմությանը, շատացել են խառն ամուսնությունները, չկան նոր ծնունդներ: Մի տեսակ խզում է առաջացել ներկայի եւ լուսավոր անցյալի միջեւ: Ու կրկին համախմբողը Հայ Եկեղեցին է: Կալկաթայում գործում է եկեղեցական վարչությունը, որն էլ կառավարում եւ համակարգում է համայնքային կյանքը: Այսօր Կալկաթայում ամենահայաշունչ օջախը 187-ամյա Հայոց Մարդասիրական ճեմարանն է՝ շուրջ 80 աշակերտով: Կարծում ենք, որ առանց Մարդասիրական ճեմարանի՝ հնդկահայ գաղութն ապագա չունի, ուստի ամեն ինչ պետք է անել՝ զորացնելու եւ առավել խնամյալ դարձնելու այն: Ո՞վ գիտե, գուցե ճեմարանականներից ոմանք ցանկանան մնալ Հնդկաստանում եւ դառնալ ապագա հնդկահայը, ով քաջ կգիտակցի իրեն վերապահված առաքելությունը: Իսկ այսօր Պարսկաստանից, Հայաստանից եւ Իրաքից ժամանած հայ երեխաների շնորհիվ ճեմարանում նշվում են մեր ազգային-եկեղեցական տոները, որոնց մասնակցում են նաեւ համայնքայինները: Ամեն ինչ արվում է գաղութի կյանքում նոր շունչ եւ վերազարթոնք ապահովելու համար: Անշուշտ, հնդկահայ գաղութին կենդանություն է հաղորդում նաեւ Դելիում ՀՀ դեսպանությունը:



*Սեյդաբադի Սբ Աստվածածին եկեղեցին*

*Շարունակությունը՝ էջ 7*

## Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնը Գուգարաց թեմում

Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան տոնի կապակցությամբ հունվարի 5-ին եւ 6-ին Գուգարաց թեմի բոլոր եկեղեցիներում մատուցվեցին Սուրբ Ծննդյան պատարագներ:

Հունվարի 6-ին, Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի առաջնորդանիստ մայր եկեղեցում Սուրբ Ծննդյան պատարագ մատուցեց թեմակալ առաջնորդ Տ. Սեպուհ եպս Չուլջյանը: Սրբազան հայրը, ընթերցելով Ամենայն Հայոց Հայրապետի սուրբծննդյան պատգամը, նաեւ շնորհավորեց Ամանորի ու Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ: Եվ ապա հավատացյալներին ուղղելով իր խոսքը՝ ասաց. «Ես ձեզ նմանեցնում եմ այն մոգերին եւ հովիվներին, ովքեր մեծամեծ նվերներով, Լուսատու աստղի առաջնորդությամբ, գնում էին Բեթղեհեմ՝ տեսնելու Թագավորին ու Փրկչին: Այսօր, ահա, բոլորս ենք եկել մեր Բեթղեհեմը՝ Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցին եւ մեր հոգեւոր նվիրումը բերել Հիսուս Մանուկին՝ խոնարհվելու եւ երկրպագելու Նրան»: Սրբազան արարողությանը ներկա էին քաղաքային եւ մարզային իշխանության ներկայացուցիչներ եւ բազմաթիվ հավատացյալներ:

Պատարագի ավարտից անմիջապես հետո մեծ հանդիսությամբ կատարվեց ջրօրհնյաց արարողություն՝ ի նշան Հորդանան գետում մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մկրտության: Ապա օրհնված ջուրը՝ որպես մաքրության խորհրդանիշ եւ բալասան ամենայն հիվանդաց, տարվեց տուն: Ի դեպ, տարեցտարի Լոռու մարզի հավատացյալ ժողովուրդը հոգեւոր ծեսերի նկատմամբ առավել նախանձախնդիր է դառնում, եւ եկեղեցական տոներին հետաքրքրությունն ու մասնակցությունն աննախադեպ չափերի են հասնում, որն էլ հուսադրող է ու մխիթարական:

Համաձայն ընդունված կարգի՝ Հայոց Եկեղեցու ջրօրհնյաց կարգի խաչքավորության պարտականությունը հանձն առան մի խումբ բարեպաշտ հայորդիներ. Վանաձորի Սուրբ Աստվածածին եկեղեցու խաչքավորն էր «Սեզամ-Գազ» ՍՊԸ տնօրեն Արմեն Մխոյանը, Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու խաչքավորը՝ «Մատինյանի Նշխար» ՍՊԸ տնօրեն Արմեն Սարուխանյանը, Սուրբ Սարգիս եկեղեցու խաչքավորը՝ արվեստագետ եւ պատկերասրահի տնօրեն Փափագ Ալոյանը:

## ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳ ՎԱՆԱՁՈՐԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵՎ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Դեկտեմբերի 28-ին Վանաձորի Սբ Աստվածածին եկեղեցում, նախագահությամբ Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս Չուլջյանի, տեղի ունեցավ նորընծա քահանա Տ. Ներսեսի ուխտի պատարագը: Թեմակալ առաջնորդը հավատացյալներին ներկայացրեց Տ. Ներսես քհն. Ղալայանին՝ որպես Սբ Աստվածածին եկեղեցու նորանշանակ հոգեւոր հովիվ, շնորհավորեց վանաձորցիներին այդ առիթով՝ ի մասնավորի ասելով. «Սիրելի՛ հավատավոր հայորդիներ, բոլորիս համար ուրախալի առիթ է այսօր՝ մասնակից եւ հաղորդակից լինելու Տ. Ներսես քհն. ուխտի պատարագին: Տ. Ներսեսը ձեզ բոլորիդ հայտնի է եղել որպես Արայիկ սարկավագ, ով տասը տարի շարունակ ձեր աչքի առջեւ իր ծառայությունն է բերել այս գողտրիկ եկեղեցում եւ այսօր ահա մեր տիրախնամ թեմում իր անդրանիկ՝ ուխտի պատարագն է մատուցում որպես քահանա: Ուստի շնորհավորում եմ բոլորիդ այս գեղեցիկ առիթով եւ նորընծա քահանահորը մաղթում աստվածահաճո ծառայություն՝ հավատարիմ իր կոչմանն ու ուխտին»:



*ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ*

Կից սենյակում

# ՄԻ՛ ՍՊԱՆԻՐ

## Պատվիրան վեցերորդ

### Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գր. Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Ղազար քհն. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ



**- Տե՛ր հայր, տասնաբանյայի այս պատվիրանով Տերն արգելում է սպանել, այլեւ հեռու մնալ այն բոլոր մեղսալի արարքներից, որոնք մղում են մարդուն սպանության: Ո՞րն է այս պատվիրանի կարեւորությունը:**

- Մարդասպանությունը ծանրագույն ոճրագործություն է: Առաջին մարդասպանը եղավ Կայենը. նա սպանեց իր եղբայր Աբելին՝ անեծք, ահ ու դող ժառանգելով իր ողջ կյանքի ընթացքում: Ոչ ոք իրավունք չունի սպանելու Աստծո պատկերով եւ նմանությամբ ստեղծված, արարչության պսակ հանդիսացող մարդուն: Սակայն այս պատիրանը վերաբերում է ո՛չ միայն մարմնավոր սպանությանը: Սպանության տեսակները երեքն են՝ մտքով, խոսքով եւ գործով: «Ով ատում է իր եղբորը, մարդասպան է»,- ասում է սբ Հովհաննես առաքյալը (Ա Հովհ. Գ 15): Տերն էլ եղբոր վրա զուր տեղը բարկացողին ու անպատվողին հավասարում է մարդասպանին (տե՛ս Մատթ. Ե 22): Ուրեմն մարդը կարող է խախտել այս պատվիրանը նաեւ մտքով՝ նախանձելով, բարկանալով, ատելով, ոխակալությամբ: Սպանություն կարող ենք գործել նաեւ խոսքով, որը հաճախ պատճառ է լինում հոգեւոր եւ մարմնավոր մահվան: Ամենաչնչին առիթի դեպքում հաճախ վիրավորում ենք միմյանց, որը սովորական է դարձել շատերի համար: Սպանություն ենք գործում, երբ չարախոսում ենք, անիծում, հայհոյում, բամբասում... Դա բարոյազրկման է տանում մարդուն: Ցավոք, այսօր այդ մոլություններով շատերն են տառապում:

**- Այո՛, տե՛ր հայր, սակայն մերօրյա մարդը չի կարողանում հասկանալ, թե ինչպես կարող են բամբասանքը կամ նախանձը սպանություն համարվել, քանի որ այդ մոլությունները հաճախ դիտվում են որպես «անմեղ» սովորություններ:**

- Այդպես մտածող մարդիկ պետք է մեկընդմիշտ հիշեն Ավետարանի ահազդու խոսքը, որն ազդարարում է, որ մարդասպաններն Աստծո արքայությունը չեն ժառանգելու: Քրիստոնեության գերխնդիրը մարդկանց սրբագործելն ու հավիտենական կյանքին արժանացնելն է: Քրիստոսը, Իր խաչելությամբ եւ մահվամբ, մարդկանց փրկեց մեղքի եւ մահվան իշխանությունից՝ պարգեւելով հավիտենական կյանքը, որին կարժանանան նրանք, ովքեր այս կյանքում պայքարել են մեղքի, անօրինությունների, չարիքի դեմ, այն ամենի դեմ, ինչը կարող է մեզ զրկել հավիտենական կյանքից, աստվածտեսությունից: Սբ մկրտությամբ, դրոշմի խորհրդով Սբ Հոգին բնակվում է մեր անձերում, որպեսզի մեզ չարից դեպի բարին առաջնորդի: Ուրեմն պետք է մերժե՛լ վատ, արատավոր սովորությունները, խոնարհվել Աստծո առջեւ՝ խնդրելով ազատել բամբասելու, նախանձելու, չարախոսելու եւ այլ վատ սովորություններից, որոնք խոսքով սպանություն են համարվում:

**- Տե՛ր հայր, սպանություն ծնող պատճառներից մեկը ոխակալությունն է: Ինչպե՞ս ազատվել այդ ախտից:**

- Միանշանակ՝ սիրով: Դիմացինին ատող, նրա նկատմամբ ոխակալությամբ լցված մարդը պիտի գիտակցի, որ ինքն էլ ունի մեղքեր, թերություններ: Եթե դիմացինի գործած մեղքը մեծ է թվում՝ իրեն սպանության մղելով, թող մտածի, որ գուցե ինքն ավելի ծանրագույն մեղքեր ունի, որոնք անպայման կբացահայտվեն Աստծո Ահեղ դատաստանի ժամանակ: «Իմն է վրեժխնդրությունը, եւ Ես կհատուցեմ»,- ասում է Տերը (Հռոմ. ԺԲ 19): Մարդն իրավունք չունի դիմացինին զրկելու կյանքից: Ավետարանը պատգամում է չարին բարով պատասխանել, սիրել թշնամուն, աղոթել նրա համար: Քրիստոսն Իր օրինակո՛վ մեզ ուսուցանեց:

**- Հայրերն ասում են, որ ինքնասպանությունն ավելի ծանր ու աններելի մեղք է, քան մարդասպանությունը: Ինչո՞ւ:**

- Ինքնասպանությունը ծնվում է հուսահատությունից: Եթե մարդասպանը դեռ ունի հնարավորություն զղջալու, ապաշխարելու, ինքնասպանը չունի այդ հնարավորությունը: Ինքնասպանը ձեռք է բարձրացնում իր կյանքի վրա, զրկում իրեն այն կյանքից, որն Աստված է պարգեւել իրեն, այսինքն՝ նա դուրս է գալիս Կյանքի Աղբյուրի՝ Աստծո դեմ: Ահա թե ինչու ինքնասպանի վրա եկեղեցական կարգ չի կատարվում, սակայն հարազատները կարող են աղոթել նրա հոգու փրկության համար, աղքատներին ողորմություն տալ նրա անունից:

**- Տե՛ր հայր, հղիության արհեստական ընդհատումը սպանություն համարվո՞ւմ է:**

- Անշո՛ւշտ: Եվ այս մեղքի համար ոչ պակաս պատասխանատվություն են կրում այդ ամենին նպաստող բժիշկները եւ խորհրդատուները: Հղիությունն արհեստականորեն ընդհատած կանայք պետք է զղջան եւ ապաշխարեն իրենց գործած մեղքի համար:

**- Այսօր հեռուստատեսությամբ տարբեր ֆիլմերի եւ հաղորդումների միջոցով քարոզվում են բռնություն, ատելություն, սպանության կատարելագործված ձեւեր... Ինչի՞ կարող է դա հանգեցնել:**

- Մարդը հակված է դեպի մեղքը, սակայն երբ լուսավորվում է Աստծո լույսով, հասկանում է, որ կյանքի նպատակը մեղք գործելը չէ, հաճույքը սպանությունը չէ, այլ սերը, խաղաղությունը, որոնք քարոզում է քրիստոնեությունը: Այդ ֆիլմերը մենք հեշտությամբ ընդունեցինք, որովհետեւ մեր մեջ աստվածպաշտության լույսը չկար: Ցավալին այն է, որ այսօր մեր երեխաներն այդ ամենը նայում են առանց ահի ու սարսափի: Ի վերջո այդ ֆիլմերում քարոզվող դաժանություններն ու սպանություններն ազդում են մարդկային հոգիների, մարդու կենցաղի վրա: Սա չափազանց վտանգավոր է, ուստի հարկ է հրաժարվել այդօրինակ գայթակղեցնող ֆիլմեր դիտելուց:

**- Տե՛ր հայր, իսկ պատերազմի ժամանակ գործվող սպանությունները սպանություն համարվո՞ւմ են:**

- Պատերազմի ժամանակ գործվող սպանությունն սպանություն չի համարվում, քանի որ կատարվում է հայրենասիրությունից ու ազգասիրությունից մղված: Ասեմ նաեւ, որ սպանություն են գործում նաեւ այն մարդիկ, ովքեր ուղղակի կամ անուղղակի մասնակցություն են ունենում սպանությանը, երբ կարող էին փրկել, ազատել ինչ-որ մեկին մահից, սակայն չեն անում այդ: Չշրջանցենք նաեւ այն սպանությունները, որոնք տեղի են ունենում մեր օրերում: Հաճախ որոշ քաղաքական սպանություններ անտեսվում են, երբ քաղաքական դիրք գրավելու կամ իշխանության գալու համար ոմանք սպանում են «իրենց ճանապարհին կանգնած մարդկանց»: Այդպիսիները դժոխային կրակն են ժառանգելու: Ցավոք, օտար չէ մեզ նաեւ ոճիր գործելու եւ անպատիժ մնալու հանգամանքը, որ գայթակղության առիթ է հանդիսանում ուրիշների համար: Սակայն եթե հետեւողական կերպով պատիժն իրականացվի, արդյունքը մեծ կլինի:

**- Տե՛ր հայր, ինչպե՞ս եք վերաբերվում մահապատժի վերացման հարցին:**

- Մահապատժի վերացման հիմքերը գալիս են Ավետարանից: Երբ օրենսգետներն ու փարիսեցիները Քրիստոսի մոտ են բերում շնության մեջ մեղադրվող կնոջը, որին, ըստ մովսիսական օրենքի, պետք է քարկոծեին, Քրիստոսն ասում է. «Ձեր միջից անմե՛ղը նախ թող քար գցի դրա վրա» (Հովհ. Ը 3-11): Եվ երբ այս լսեցին, հեռացան, որովհետեւ անմեղ չէին: Մ. Գոշի «Դատաստանագրքում» ասվում է, որ հանուն Քրիստոսի ողորմության՝ պետք չէ սպանել, այլ ցմահ ապաշխարություն սահմանել: Ուրեմն քրիստոնյայի համար այս հարցը հստակ է: Այսպիսով՝ աստվածային այս պատվիրանն արգելում է սպանել թե՛ մտքով, թե՛ ձեռքով եւ թե՛ գործով, այլեւ հորդորում է բարիք գործել, օգնել մարդկանց, բոլորի նկատմամբ լինել ողորմած, բարյացակամ, ներողամիտ եւ խաղաղարար:

*Հյուրընկալեց Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ*

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՏՔԵՐԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

*Սկիզբը՝ էջ 6*

**- Ինչպես շատ այլ երկրներում, այնպես էլ Հնդկաստանում հայը կառուցել է շատ եկեղեցիներ: Ի՞նչ վիճակում են այսօր այդ եկեղեցիները, եւ ինչպե՞ս են պահպանվում դրանք:**

- Պատմականորեն Հնդկաստանում ունեցել ենք 10 հայկական եկեղեցի: Ցավոք, այսօր այլեւս չկան Ագրայի եւ Սուրաթի եկեղեցիները, որտեղ, սակայն, դեռեւս պահպանվում են հայկական գերեզմանոցները: Միաժամանակ ուրախությամբ պետք է արձանագրել, որ չնայած խիստ փոքրաթիվ հայությանը՝ վերջին մի քանի տարիների ընթացքում, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ, Կալկաթայի եկեղեցական վարչության եւ հնդկահայոց հոգեւոր հովվի միասնական ջանքերի շնորհիվ հիմնովին նորոգվել են Սեյդաբադի Ս. Աստվածածին, Մադրասի Ս. Աստվածածին, Կալկաթայի Ս. Գրիգոր Լուսավորիչ, Տինգրայի Ս. Երրորդություն եկեղեցիները: Խնամյալ եւ բարեկարգ վիճակում են Բոմբեյի Ս. Պետրոս, Չինսուրահի Ս. Հովհաննես եկեղեցիներն ու եկեղեցապատկան տարածքները: Այժմ կանոնավորապես սբ պատարագներ եւ եկեղեցական արարողություններ են կատարվում Կալկաթայի 300-ամյա Ս. Նազարեթ հայկական եկեղեցում, որը քաղաքի ամենահին քրիստոնեական աղոթատունն է: Ի դեպ՝ հենց այս եկեղեցու բակում է գտնվում Բենգալիայի ամենահին քրիստոնեական գերեզմանը՝ 1630 թ. մահացած Ռզաբիբե հայուհու շիրիմը: Պատմական այս գերեզմանը ոչ միայն մեր ժողովրդի պատմության անքակտելի մասն է, այլեւ դարձել է հենց Հնդկաստանի պատմամշակութային հարուստ ժառանգության մի մասնիկը:




*Ռզաբիբեի գերեզմանը*

Հետաքրքիր է, որ վերջին տարիներին միայն հայտնաբերվեց մի մատուռ Դելիում՝ հավանաբար ԺԸ դարի: Դելիում վաղուց հայեր չեն բնակվում, իսկ եկեղեցին ամբողջությամբ շրջապատված է շենքերի խիտ օղակով: Սակայն մատրան տարածքում դեռեւս պահպանվել է հայերեն եւ պարսկերեն արձանագրություններով 15 գերեզմանաքար: Իսկ հայկական գերեզմանների մի մասի վրա կառուցված են տներ, որոնց ներսում կարելի է տեսնել հնամենի շիրմաքարերը:

Չպետք է մոռանալ նաեւ, որ բացի Հնդկաստանից, հայկական եկեղեցիներ ունենք նաեւ ժամանակին Հնդկաստանի Բենգալիա նահանգի մաս կազմող, այժմ՝ Բանգլադեշի մայրաքաղաք Դաքքայում, Մյանմարի (Բիրմա) մայրաքաղաք Ռանգունում, Բաթավիայում (այժմ՝ Ջակարտա): Եթե 1781 թ. կառուցված Դաքքայի Ս. Հարություն եկեղեցին խնամում է Բանգլադեշի վերջին հայերից Ռիկի Մարտինը, ապա մյուսների վիճակի մասին ընդհանրապես տեղեկություններ չունենք, որոնք եւս մեր հոգեւոր ժառանգության մաս են կազմում եւ թերեւս կարոտ են խնամքի: Բարեբախտաբար, այնտեղ, որտեղ այլեւս հայեր չկան, մեր եկեղեցիները երբեմն խնամվում են քրիստոնյա հնդիկների կողմից:



*Կալկաթայի, Սբ Նազարեթ եկեղեցին*

**- 2007-ին Հնդկաստանում Ձեր աշխատասիրությամբ լույս տեսավ «Արեւմտյան Բենգալիայում թաղված հայ հոգեւորականները» ուսումնասիրությունը: Ունե՞ք նմանատիպ ուսումնասիրություններ Հնդկաստանի այլ շրջանների վերաբերյալ:**

- 2005 թ. հայրապետական տնօրինությամբ նշանակվելով Հայոց Մարդասիրական ճեմարանի վարչական տնօրեն եւ սպասավոր սարկավագ հնդկահայոց եկեղեցիներում՝ առիթ ունեցա լինելու մեր բոլոր կանգուն եկեղեցիներում եւ հայկական գերեզմանոցներում՝ չափազանց հետաքրքիր տեղեկություններ հավաքելով պատմական այդ հարուստ ժառանգության մասին: Ինձ համար շատ ցավալի էր արձանագրել, որ այսօրվա հնդկահայը տեղյակ չէ իր անցյալին, չգիտե, թե ովքե՛ր են թաղված մեր եկեղեցիների շրջակայքում եւ հայկական գերեզմանատներում: «Արեւմտյան Բենգալիայում թաղված հայ հոգեւորականները» ուսումնասիրությունը իմ սրտի եւ հոգու պարտքն էր Հնդկաստանում սպասավորած հայ հոգեւորականների խնկելի հիշատակին, որ սիրով նվիրել եմ Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցու հիմնադրման 300-ամյակին:

*Շարունակությունը՝ էջ 8*

*28 հունվարի. ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐ*

# ՎԵ՛Ր ԿԱՑ, ՏՂԱ՛Ս

## Գուրգեն Մարգարյանի հիշատակին



Դրսում ցուրտ էր:

Ձմռան բուքը հեւիհեւ, բայց եւ անվարան ահագնանում էր՝ սպառնալով կոտրել գյուղական տան լուսամուտը: Ու փոքրիկ տղան՝ վախն աչքերում, կուչ եկած անկողնում, այնքան քնքշությամբ ու կարոտով էր հիշում, թե ինչպես մի ժամանակ՝ գարնանը, այդ լուսամուտից ներս էին թափանցում կարմրատակած արեւի բոսոր ճառագայթները:

Վաղ առավոտյան, երբ դեռեւս թաց կանաչի վրա նրբորեն սահում էր եղյամը, ու իրենց սուր ու քաղցր երխոսությունն էին սկսում թռչունները, ճռնչալով բացվում էր նախամուտքի դուռը, ու քաղցր երազի պես հնչում էր մոր ձայնը. «Վե՛ր կաց, տղա՛ս»: Մի ժամանակ լալագին ու երգեցիկ՝ խոխոջուն առվակի նման, սակայն տարիների ընթացքում փոխվել էր այդ ձայնը: Ամեն անգամ յուրահատուկ սիրով էր լսում այն՝ այնքան հարազատ ու աննկարագրելի գուրգուրանքով լի: Քնի ամենաքաղցր պահին, հաճախ երազը կիսատ թողած, վեր էր թռչում, անտարբեր հայացքով նայում շուրջն ու մտածում. գուցե մայրը դիտմա՞մբ է իրեն արթնացրել: Հետայնու հասկանալով, որ դա անհնար է, չէ՞ որ մայրը սիրում է իրեն, սթափվում էր եւ ալարկոտ հորանջելով, դես ու դեն նայելով՝ մտքի մեջ ինքն իրեն նախատում:

Դրսում անելու շատ բան կար. հարկավոր էր ցախ կոտրել, կարգի բերել բակը, ջուր կրել առվակից... Հետո՝ տարիներ անց, տղան անասելի կարոտով էր հիշում այդ օրերը:

Երեկոյան՝ արոտից անասուններին տուն բերելիս, սովորաբար լռելյայն խորհում էր, տարվում մտքերով, իսկ հետո ուշքի գալով՝ շուրջբոլորն էր նայում՝ տեսնելու, թե մեկնումեկն այլ ճանապարհով չի՞ գնացել. ուրախանում էր, որ այսօր էլ չի գնալու փնտրելու: Չէ՛, ճիշտն ասած, չէր հոգնում, ուղղակի ցանկանում էր ժամանակը լցնել մեկ այլ, ավելի հետաքրքիր զբաղմունքով: Այնուհանդերձ, օրերն անցնում էին, բայց այդպես էլ գյուղական կյանքում ոչ մի լուրջ փոփոխություն չէր նկատվում: Երբեմն քաղաքից հյուրեր էին գալիս, որոնք հետաքրքրաշարժ պատմություններ էին անում: Սկզբում տղան ուշադրությամբ լսում էր, բայց վերջ ի վերջո սկսում էր ձանձրանալ ու հիասթափվել: Քաղաքից եկած մարդիկ հաճախ չափազանց քաղաքավարի էին եւ խելացի, բայց երբեմն նաեւ՝ կոպիտ ու աննրբանկատ. կիսատ թողնելով սկսած պատմությունը՝ սկսում էին խոսել մեկ այլ բանից, որն արդեն հետաքրքիր չէր, ավելին՝ անիմաստ ու անտեղի: Այդպիսի պահերի տղան սովորաբար աննկատ առանձնանում էր եւ սուզվելով սեփական երեւակայությամբ ստեղծված իր աշխարհը՝ մխիթարվում:

Ինչեւէ, ժամանակը հոսում էր, տղան՝ մեծանում:

...Հիմա նա արդեն տղամարդ էր: Նրան վստահել էին սեփական երկրի սահմանները պաշտպանելու վեհ գործը: Յուրաքանչյուր մեկը, ում այդպիսի բախտ է վիճակվել, արդեն իսկ տղամարդ է: Մանուկ հասակում պատահում էր, որ ազատ ժամերի երկար մտածում էր, թե ինչպես կմեծանա ու կմեկնի ծառայության: Ինչ հետաքրքիր էին այդ ժամերն ու րոպեները, բայց այժմ կարծես թե դժվար էր բաժանվել հայրենի գյուղից, ընկերներից: Եվ հետո, ինչպե՞ս մենակ թողնել մորը, չէ՞ որ նրա համար այնքան դժվար կլինի:

Սովորականի պես դուռը բացվեց: Ամրապինդ հաճարենու փայտից պատրաստված դուռն էլ տարիների ընթացքում մաշվել էր, ծերացել...

Թվում էր, թե տղային արթնացնողը մոր ձայնը չէր: Նա վաղուց արդեն արթնացել էր, մտածկոտ աչքերն այս ու այն կողմ հառելով՝ փորձում էր ինչ-ինչ հարցերի վերաբերյալ դատողություններ անել, բայց, ավա՜ղ, խռիվ-խռիվ մտքերը հոսում էին նրա գլխից՝ փախչելով ու աննկատ հեռանալով, եւ այդպես էլ հնարավոր չէր լինում որեւէ բանի վրա կենտրոնանալ:

Ձմեռը դեռ չէր հասել իր ավարտին, սակայն մթնոլորտի մեջ արդեն իսկ տաք երանգներ էին նշմարվում: Գիշերներն աստղերը երամ-երամ խռնվում էին իրար շուրջ, եւ անզեն աչքով կարելի էր լինում տարբերել այս կամ այն համաստեղությունը: Երբեմն թեթեւ քամի էր բարձրանում, ու մերկ ծառերի կատարները հլու-հնազանդ հարսների նման մեղմորեն խոնարհում էին իրենց գլուխները...

...Երկինքը պարզ էր: Արեւը լավ օր էր խոստանում: Մայրը սովորականի պես զբաղված էր առօրյա հոգսերով: «Երեւի գիշերը լավ չեմ քնել»,- մտածեց նա: Ինչ-որ անբացատրելի անհանգստություն էր համակել նրան: Զգում էր, որ ինչ-որ տեղ, ինչ-որ բան այնպես չէ: Երեք ամիս էր, որ տղայից ոչ մի նամակ, ոչ մի տեղեկություն չուներ: Ձեռքերը ծնկներին, մառանից քիչ այն կողմ դրված կոճղին նստած, ինքն էլ չէր զգացել, թե ինչպես էր օրը կես եղել: Աչքերի մեջ խոր թախիծ, հոգնաբեկ ու երերուն հայացքով հեռվին գամված՝ մտքով տղայի կողքին էր: Հանկարծ սիրտն սկսեց սովորականից ավելի արագ բաբախել, ցավը ստիպեց, որ թմբիրից արթնանա:

Հեռվում մարդկանց դեմքեր նշմարվեցին՝ բազմախորհուրդ հայացքներով: Հետո երեւաց զինվորական մեքենա՝ զարմանալիորեն մեծ ու տձեւ: Մոր հայացքը, ընձյուղվելով դեպի եկողները, հետզհետե կենտրոնացավ մեքենայի վրա, որն անշտապ, բայց հաստատուն ընթացքով դեպի իրեն էր գալիս: «Ի՞նչ է, տունս քանդելո՞ւ ես գալիս»,- կայծակնային արագությամբ սլացող միտքը հանկարծ մի պահ մեխվեց մոր գլխում:

Վայրկյանների ընթացքում, վերլուծելով իրեն ուղղված հայացքները, ամեն ինչ հասկացավ: Ակամայից ծնկները ծալվեցին, լեզուն կապ ընկավ, եւ ուշագնաց՝ ձեռքերի ափերով հպվեց գետնին:

...Կեսօր էր: Գյուղի բնակիչները մեկտեղված, համրախոս ու հանդարտ բարձրանում էին զառիվերը: Բոլորի աչքերն արցունքոտ էին, ծերունիները քայլում էին՝ իրար հետեւից վառելով ծխամորճները: Առջեւում գյուղի գերեզմանոցն էր:

Որոշ եկեղեցական շարականներից ու աղոթքներից հետո քահանան ներկաներին հրավիրեց վերջին հրաժեշտը տալու հանգուցյալին:

Վշտահար մոր սիրտը հնարավոր չէր սփոփել աղքատիկ ու սին բառերով: Իրականությունն այնքան դաժան էր ու այնքան ակներեւ: Միայն բազմության միջից մերթընդմերթ լսվում էր տառապող մոր ձայնը. «Վե՛ր կաց, տղա՛ս»: Բայց տղան լուռ էր: Նրա հոգին վաղուց արդեն սավառնում էր երկնի կապույտ լազուրի մեջ, որտեղից նայում էր հավաքվածներին ու մեղմորեն ժպտում. չէ՞ որ նա իր հայրենիքի զինվորն էր. նրան վստահել էին սեփական հայրենիքի սահմանները պաշտպանելու վեհ գործը:

***Իսահակ աբղ. ՊՈՂՈՍՅԱՆ***

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՏՔԵՐԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ



*93-ամյա Ռոզ Էկնայանը եւ Բոմբեյի Ս. Պետրոս եկեղեցու խնամակալ հայուհի Զաբել Ջոշին*

*Սկիզբը՝ էջ 7*

Գրքում մասնավորապես անդրադարձել եմ Սեյդաբադ, Չինսուրահ եւ Կալկաթա հայկական քաղաքներում թաղված հայ հոգեւորականներին ու հնդկահայ մի շարք նշանավոր հայորդիներին: Սակայն ձեռքիս տակ բավականաչափ նյութեր՝ լուսանկարներ ու վավերագրեր ունեմ նաեւ երբեմնի հայաշատ վայրերում դեռեւս պահպանված հայկական եկեղեցիների եւ նրանց հարակից հայկական գերեզմանատների մասին: Հույս ունեմ, որ ինձ բախտ կվիճակվի առավել խորությամբ անդրադառնալու Հնդկաստանի եւ հարակից երկրների մեր մյուս բոլոր հայկական եկեղեցիներին ու գերեզմաններին:

**- Ձեր ուսումնասիրության մեջ տեղ են գտել զուտ հոգեւոր ժառանգության մաս կազմող պատմական արժեքները: Մինչդեռ բազմաթիվ հարուստ առեւտրականներով հայտնի երբեմնի գաղութը պետք է որ, հոգեւոր շինություններից զատ, ժառանգած լինի նաեւ աշխարհիկ կառույցներ: Արդյո՞ք պահպանվում են այդ կառույցները:**

- Հնդկաստանում հայերը բարի անուն եւ համբավ են թողել բոլոր այն վայրերում, ուր ապրել ու արարել են: Եվ այսօր էլ նրանք հայտնի են իրենց աշխատասիրությամբ, հյուրասիրությամբ, բարեգործություններով, կառուցելու եւ ինչ-որ նոր բան արարելու շնորհներով: Այժմ Կալկաթայում բազմաթիվ կանգուն շինություններ կան, որոնց հայերեն արձանագրությունները կամ պատմությունը վկայում են դրանց երբեմնի հայկական պատկանելության մասին: Օրինակ՝ Կալկաթայի կենտրոնական փողոցի շինությունների մեծ մասը ժամանակին պատկանել է հայերին: Դրանք առանձնանում են իրենց ճարտարապետական լուծումներով եւ գեղեցկությամբ: Այդ շենքերի պատերի վրա թողնված փոքրիկ արձանագրությունները փաստում են, որ դրանք պատկանել են Թադեոս Մեսրոպ Թադեոսին եւ Հովհաննես Կարապետ Գալուսթունին: Վերջինս այնքան հարգված անձնավորություն է եղել, որ երբ 1921 թ. դեկտեմբերին Ուելսի արքայազնը՝ ապագա Էդուարդ Ը թագավորը, ժամանել է Կալկաթա, իջեւանել է մեծ հայորդու տանը: Դժբախտաբար, այսօր ոչ մի հայ չի ապրում այդ շենքերում, հայերի մասին հիշեցնող միակ վկայությունն այդ շենքերից մեկի երկրորդ հարկում զետեղված հայկական ակումբն է, ուր երբեմն հավաքվում են հայերը եւ ժամանակ անցկացնում:

Կալկաթայի ամենաբարձրակարգ հյուրանոցներից մեկը՝ «Grand» հյուրանոցը եւս ժամանակին պատկանել է հայի՝ ջուղայեցի վաճառական Արաթուն Ստեփանին, ով անխոհեմաբար կորցրել է սեփականության իրավունքը: Նրան են պատկանել նաեւ մի շարք այլ հյուրանոցներ: Այս մասին այսօր հիշեցնում է միայն «Grand» հյուրանոցի երկրորդ հարկում՝ ամենքի աչքից հեռու տեղադրված վաճառականի կիսանդրին: Ցավոք, այլեւս այլ հիշատակ չկա: Թերեւս նաեւ Արաթուն Ստեփանի՝ Կալկաթայում բնակվող տարեց թոռնուհին է, որ ամեն ամիս հիշեցնում է երբեմնի հյուրանոցատիրոջ մասին: Իբրեւ սեփականատիրոջ ժառանգ՝ նրան իրավունք է տրված ամիսը մեկ օր անվճար մնալ այդ հյուրանոցում եւ օգտվել բոլոր ծառայություններից:

Կալկաթայում ունենք նաեւ հայկական փողոց, որին հարակից շենքերը մի ժամանակ հայերով լի էին: Բայց ժամանակի ընթացքում հայերը զանազան պատճառներով կորցրել են նաեւ այդ շինությունները:

Հատկանշական է, որ Կալկաթայում Մայր Թերեզայի անվան քույրերի միաբանության ներկայիս շենքը, որտեղ ամփոփված է սրբակյաց քույրի մարմինը, նույնպես պատկանել է հայի: Հայազգի բարերարը շենքը նվիրել է Մայր Թերեզային՝ իր առաքելությունը լիարժեք իրականացնելու համար:

Հայկական հետքն առկա է նաեւ Բոմբեյում: Այսօր այս քաղաքում հայերին է պատկանում միայն բարձրահարկ շենքի մեկ հարկաբաժին, ուր ապրում է 93-ամյա հայուհի Ռոզ Էկնայանը: Շենքի ճակատին մինչեւ այժմ էլ պահպանվում է անգլերեն լեզվով «Արարատ» գրությունը:

Մադրասում ունենք հայկական փողոց, եւ գրեթե բոլոր եկեղեցիներում կարելի է հանդիպել հայկական գերեզմանների: Երբեմնի մշակութային ծաղկում ապրող հայկական այս քաղաքում բազմաթիվ են նշանավոր վաճառական Պետրոս Ոսկանի կառուցած շինությունները՝ քաղաքի երկու մասերը կապող կամուրջը, Ս. Թովմայի բլրի վրա եկեղեցի տանող աստիճանները: Հավանաբար հայ վարպետների վրձնի արդյունքն են նաեւ նույն այդ եկեղեցում կախված հայերեն արձանագրություններով առաքյալների պատկերները, որ ստեղծվել են նույն Պետրոս Ոսկանի բարերարությամբ: Ցավալիորեն, Մադրասին մեծ ծառայություններ մատուցած այս հայորդու գերեզմանը իր իսկ գումարով կառուցված կաթոլիկ եկեղեցու բակի անշուք մի անկյունում է, որից անտեղյակ էր անգամ եկեղեցու սպասավոր քահանան:

Այսօր Վեհափառ Հայրապետի, բազմաթիվ բարձրաստիճան հայ



*Արաթուն Ստեփանի կիսանդրին*

պաշտոնյաների, գործարարների, մշակույթի եւ արվեստի գործիչների այցելությունները Հնդկաստան միանշանակ հույս են ներշնչում, որ մեր պատմական արժեքները չեն մոռացվի ու կպահպանվեն դեռ երկար դարեր:

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան
**Համարի պատասխանատու՝**
Նարե Սարգսյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
**Հեռախոս՝ 517197**
**Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am**
Ստոր. տպագր. 16. 1. 2009 թ.
**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**